Գործ ԱՎԴ4/0019/01/15

ԴԱՏԱՎՃԻՌ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ՝ (այսուհետ նաև՝ Դատարան)՝

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎՈՐ՝	Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝	Գ. ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԵՂԱԴՐՈՂ՝	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶ Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆՆԵՐ՝	Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ Է.ԲԵԳԼԱՐՅԱՆԻ
ՏՈՒԺՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝	Ն.ՄԱՂԱՔՅԱՆԻ

դռնբաց դատական նիստում, Եղեգնաձոր քաղաքում, 2015 թվականի հուլիսի 30-ին արագացված կարգով քննելով քրեական գործն ըստ մեղադրանքի՝

Լաուրա Գվիդոնի Բաղդասարյանի ՝ ծնված՝ 10.08.1966 թվականին Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում, ամուսնալուծված, աշխատում է <<ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ում մանկավարժ, բարձրագույն կրթությամբ, հայ, ՀՀ քաղաքացի, նախկինում չդատված, խնամքին ոչ ոք, հաշվառված և բնակվում է Վայոց ձորի մարզ, քաղաք Ջերմուկ, Մյասնիկյան 10/7 հասցեում,

մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ, որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը,

Մանե Յուրիկի Աղաբեկյանի ՝ ծնված 04.11.1988 թվականին Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում, ամուսնալուծված, չի աշխատում, միջնակարգ կրթությամբ, հայ, ՀՀ քաղաքացի, նախկինում չդատված, խնամքին ոչ ոք, հաշվառված և բնակվում է Վայոց ձորի մարզ, քաղաք Ջերմուկ, Զախափնյակ թաղամաս, 13-րդ շենք, բնակարան 11 հասցեում,

մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ, որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը,

Քրիստինե Հրանտի Գևորգյանի ՝ ծնված 03.09.1977 թվականին Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում, ամուսնացած, աշխատում է <<Հայ տիտան>> ՓԲԸ Կեչուտի մասնաճյուղում որպես ավագ օպերատոր, միջնակարգ կրթությամբ, հայ, ՀՀ քաղաքացի, նախկինում չդատված, խնամքին երեք երեխա, հաշվառված և բնակվում է Վայոց ձորի մարզ, քաղաք Ջերմուկ, Զախափնյակ թաղամաս, 9-րդ շենք, բնակարան 22 հասցեում,

մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ, որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը,

ՊԱՐԶԵՑ՝

1. Գործի դատավարական նախապատմությունը.

ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Հ.Պողոսյանի 04.09.2014թ. որոշմամբ՝ հարուցվել է թիվ 35100914 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, այն ընդունվել է վարույթ և կատարվել նախաքննություն: (հ. 1, գ.թ. 1)

18.11.2014թ.-ին Մանե Աղաբեկյանը և Լաուրա Բաղդասարյանը ձերբակալվել են: (հ. 2, գ.թ. 1-2, 11-12)

18.11.2014թ.-ին Մանե Աղաբեկյանը արգելանքից ազատվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին: (հ.2, գ.թ. 18, 19)

19.11.2014թ.-ին Լաուրա Բաղդասարյանը արգելանքից ազատվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին: (հ.2, գ.թ. 29, 31)

Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Կ. Կարապետյանի 19.11.2014թ. որոշմամբ Լաուրա Բաղդասարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: (հ.2, գ.թ. 36-37)

Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Կ. Կարապետյանի 21.11.2014թ. որոշմամբ Լաուրա Բաղդասարյանի պաշտոնավարումը <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն պաշտոնում ժամանակավոր դադարեցվել է: (հ.2, գ.թ. 64-65)

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Հ. Պողոսյանի /այսուհետ նաև՝ Քննիչ/ 25.11.2014թ. որոշմամբ Մանե Աղաբեկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: (հ.2, գ.թ. 67)

Քննիչի 27.12.2014թ. որոշմամբ Վայոց ձորի մարզպետարանը ճանաչվել է որպես տուժող, իսկ նույն օրվա որոշմամբ տուժողի ներկայացուցիչ է ճանաչվել Նարինե Մաղաքյանը: (հ.2, գ.թ. 146, 147)

Քննիչի 2015 թվականի փետրվարի 09-ի որոշումներով Լաուրա Բաղդասարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և Լ. Բաղդասարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, այն բանի համար, որ նա հանդիսանալով պաշտոնատար անձ, պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ շահադիտական նպատակներով ակնհայտ կեղծ տեղեկություններ պարունակող պաշտոնական փաստաթղթեր կազմելով՝ կատարել է առանձնապես խոշոր չափերի յուրացում:

Այսպես.

Լաուրա Բաղդասարյանը 2005 թվականից աշխատելով որպես <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն և հանդիսանալով պաշտոնատար անձ, օժտված լինելով կազմակերպչական-տնօրինչական լիազորություններով՝ իրավասու լինելով խորհրդի հաստատմանը ներկայացնելու դպրոցի հաստիքացուցակը, իրականացնելու

մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, նրանց աշխատանքի ընդունումը և աշխատանքային պայմանագրի լուծումը, վերահսկողություն իրականացնելու հանրակրթական դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, ապահովելու ներքին աշխատանքային կարգապահության կանոնների պահպանումը, ապահովելու բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, յուրացման եղանակով ուրիշի գույքի հափշտակություն կատարելու դիտավորությամբ և նպատակով Ջերմուկ քաղաքի բնակչուհի Մանե Աղաբեկյանին հրամանագրել է որպես նշված ուսումնական հաստատության դռնապահ և 2008թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2014թ. մայիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում վերջինիս աշխատանքի չներկայանալու պայմաններում, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, կազմել և իր ստորագրությամբ հաստատել է <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի աշխատավարձ ստացողների վերաբերյալ պաշտոնեական փաստաթուղթ հանդիսացող ցուցակներ, որոնցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ու գրառումներ մտցնելով ներառել է նաև Մանե Աղաբեկյանի տվյալները, արդյունքում վերջինիս անվամբ որպես աշխատավարձ հաշվարկված առանձնապես խոշոր չափի՝ 3.491.851 ՀՀ դրամ գումարը ստացել և տնօրինել է անձամբ: (հ.2, գ.թ. 178-179, 180, 181, 182, 183, 184):

Քննիչի 2015 թվականի փետրվարի 16-ի որոշումներով Մանե Աղաբեկյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, նա ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, այն բանի համար, որ նա օժանդակել է պաշտոնատար անձ հանդիսացող <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն Լաուրա Բաղդասարյանին կատարել առանձնապես խոշոր չափերի յուրացում:

Այն է՝ Լաուրա Բաղդասարյանը 2005 թվականից աշխատելով <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն և հանդիսանալով պաշտոնատար անձ, օժտված լինելով կազմակերպչական-տնօրինչական լիազորություններով՝ իրավասու լինելով խորհրդի հաստատմանը ներկայացնել դպրոցի հաստիքացուցակը, իրականացնել մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, նրանց աշխատանքի ընդունումն և աշխատանքային պայմանագրի լուծումը, վերահսկողություն իրականացնել հանրակրթական դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, ապահովել ներքին աշխատանքային կարգապահության կանոնների պահպանումը, ապահովել բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, օգտվելով նշված այդ լիազորություններից, 2008 թվականի հոկտեմբեր ամսվա սկզբից դիտավորություն է ունեցել յուրացման եղանակով ուրիշի գույքի հափշտակություն կատարել, այն է՝ դպրոցի դռնապահ ընդունել և դռնապահի անվամբ դուրս գրված գումարը յուրացման միջոցով հափշտակել: Դպրոցի տնօրենի հափշտակություն կատարելու դիտավորությանը օժանդակել է Ջերմուկ քաղաքի բնակչուհի Մանե Աղաբեկյանը: Այդ նպատակով Մանե Աղաբեկյանն որպես դպրոցի դռնապահ աշխատանքի ընդունվելու համար ներկայացրել է փաստաթղթեր, դիմում, կնքել աշխատանքային պայմանագիր և 2008թ. հոկտեմբերի 1-ից հրամայվել է որպես նշված ուսումնական հաստատության դռնապահ: Սակայն, Մանե Աղաբեկյանը մինչև 2014թ. մայիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում աշխատանքի

չի ներկայացել և իմանալով հանդերձ, որ դպրոցի տնօրեն Լաուրա Բաղդասարյանն իր անվամբ դուրս է գրում աշխատավարձ, անձամբ ստանում և տնօրինում, շարունակելով վերջինիս օժանդակել, հաշվապահական փաստաթղթերում և ցուցակներում կատարել է ստորագրություններ, դրանով իսկ վերացնելով Լաուրա Բաղդասարյանի համար խոչընդոտները, հնարավորություն է տվել իր անվամբ որպես որպես աշխատավարձ դուրս գրել առանձնապես խոշոր չափի՝ 3.491.851 ՀՀ դրամ գումար, որը ստացել է Լաուրա Բաղդասարյանը և տնօրինել այն: (հ.2, գ.թ. 186-187, 188, 189-190, 191, 192, 193)

Քննիչի 2015 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ Քրիստինե Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, այն բանի համար, որ նա օժանդակել է պաշտոնատար անձ հանդիսացող <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն Լաուրա Բաղդասարյանին կատարել զգալի չափերի յուրացում:

Այն է՝.

Լաուրա Բաղդասարյանը 2005 թվականից աշխատելով <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն և հանդիսանալով պաշտոնատար անձ, օժտված լինելով կազմակերպչական-տնօրինչական լիազորություններով՝ իրավասու լինելով խորհրդի հաստատմանը ներկայացնել դպրոցի հաստիքացուցակը, իրականացնել մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, նրանց աշխատանքի ընդունումն և աշխատանքային պայմանագրի լուծումը, վերահսկողություն իրականացնել հանրակրթական դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, ապահովել ներքին աշխատանքային կարգապահության կանոնների պահպանումը, ապահովել բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, օգտվելով նշված այդ լիազորություններից, դիտավորություն ունենալով յուրացման եղանակով ուրիշի գույքի հափշտակություն կատարել, այդ նպատակով 2008 թվականի հոկտեմբեր ամսվա սկզբից դպրոցի դռնապահ է ընդունել Մանե Աղաբեկյանին և մինչև 2014 թվականի մայիսի 30-ը ներառյալ վերջինիս անվամբ որպես աշխատավարձ դուրս գրել 3.491.851 ՀՀ դրամ գումար, որը ստացել տնօրինել է անձամբ: Նշված 3.491.851 դրամ գումարից 497.565 ՀՀ դրամ գումարի յուրացմանը օժանդակել է Քրիստինե Գևորգյանը, ում հանցակցությունը կատարված ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքում կայացել է հետևյալում. 2013 թվականի նոյեմբերի 21-ին դպրոցի տնօրեն Լաուրա Բաղդասարյանը դպրոցի հաշվապահ է նշանակել Մանե Աղաբեկյանի մորաքրոջը՝ Ջերմուկ քաղաքի բնակչուհի Քրիստինե Գևորգյանին, ով նշված դպրոցում հաշվապահ է աշխատել մինչև 2014 թվականի հունիսի 13-ը: Որպես հաշվապահ աշխատած ժամանակահատվածում Քրիստինե Գևորգյանը իմանալով, որ քրոջ աղջիկը՝ Մանե Աղաբեկյանը աշխատելով որպես դռնապահ, իսկ 2014 թվականի հունվարից պահակ, մինչև 2014թ. մայիսի 30-ը ներառյալ աշխատանքի չի ներկայացել և տնօրեն Լաուրա Բաղդասարյանի կազմած, վերջինիս կողմից հաստատված <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի աշխատավարձ ստացողների վերաբերյալ պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող ցուցակների հիման վրա, որոնցում առկա են եղել իր համար ակնհայտ կեղծ տեղեկություններ ու գրառումներ Մանե Աղաբեկյանի աշխատավայրում լինելու և աշխատանքային պարտականությունները կատարելու մասին, որպես հաշվապահ կազմել է աշխատավարձի ցուցակները, այդ թվում նաև Մանե Աղաբեկյանի վերաբերյալ, ներկայացրել է <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ Ջերմուկի մասնաճյուղ, դրանով իսկ

վերացնելով Լաուրա Բաղդասարյանի համար խոչընդոտները, հնարավորություն է տվել վերջինիս՝ 2013 թվականի նոյեմբերից մինչև 2014 թվականի մայիսի 30-ը ներառյալ, Մանե Աղաբեկյանի անվամբ որպես աշխատավարձ դուրս գրել զգալի չափի՝ 497.565 ՀՀ դրամ գումար, որը ստացել է Լաուրա Բաղդասարյանը և ստացած գումարը տնօրինել է անձամբ: (հ.2, գ.թ. 195, 196-197, 198, 199, 200, 201, 202)

Քննիչի 2015 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ Քրիստինե Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը: (գ.թ. 203-204)

Քննիչի 2015 թվականի մարտի 09-ի որոշմամբ՝ թիվ 35100914 քրեական գործով քաղաքացիական հայցվոր է ճանաչվել Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանը: (գ.թ. 281-282)

2015 թվականի ապրիլի 20-ին ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Կ.Կարապետյանը հաստատել է մեղադրական եզրակացությունը: (գ.թ. 297-315, Դատարանի նյութեր)

Քրեական գործն ըստ մեղադրանքի Լաուրա Գվիդոնի Բաղդասարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Մանե Յուրիկի Աղաբեկյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Քրիստինե Հրանտիկի Գևորգյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Դատարան ուղարկվել է 2015 թվականի ապրիլի 20-ին, Դատարանում ստացվել է 2015 թվականի ապրիլի 22-ին և 2015 թվականի ապրիլի 27-ին ընդունվել է վարույթ:

2015 թվականի մայիսի 11-ին Դատարանը որոշում է կայացրել քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

2015 թվականի հունիսի 5-ին Դատարանում ստացվել է հայցադիմում՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից, որով վերջինս խնդրում է Լաուրա Բաղդասարյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 178.611 ՀՀ դրամ:

2. Արագացված դատական քննություն.

Մինչ դատաքննությունն սկսելն ամբաստանյալներ Լաուրա Բաղդասարյանը, Մանե Աղաբեկյանը և Քրիստինե Գևորգյանը միջնորդեցին դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարեցին, որ միջնորդությունը ներկայացրել են կամավոր, խորհրդակցել են պաշտպանի հետ, գիտակցում են արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրենց պարզ է, համաձայն են մեղադրանքի հետ:

Մեղադրող Կ.Կարապետյանը չառարկեց դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ:

Տուժողի ներկայացուցիչ Ն.Մաղաքյանը չառարկեց դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ և խնդրեց քաղաքացիական հայցը թողնել առանց քննության՝ Դատարանին ներկայացնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանի 02.07.2015թ. գրություն, որում մասնավորապես նշված է, որ հիմք ընդունելով Լ. Բաղդասարյանի կողմից պետությանը պատճառված 3.491.851 ՀՀ դրամից պակաս վերականգնված 178.611 ՀՀ դրամը վերականգնելու վերաբերյալ 19.05.2015թ. անդորրագիրը, Վայոց ձորի մարզպետարանը հրաժարվում է 25.05.2015թ. ներկայացված հայցապահանջից և խնդրում է հայցադիմումը թողնել առանց քննության:

Դատարանը համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ և 375.2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները, որոշում է կայացրել արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին:

Դատարանը, հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները՝ գտնում է, որ ամբաստանյալ Լաուրա Բաղդասարյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Մանե Աղաբեկյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Քրիստինե Գևորգյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքներ:

3. Դատարանի իրավական վերլուծությունները.

Նախաքննությամբ ձեռք բերված վերոնշյալ ապացույցները գնահատելիս՝ Դատարանը եկավ այն եզրահանգման, որ Լաուրա Բաղդասարյանին, Մանե Աղաբեկյանին և Քրիստինե Գևորգյանին առաջադրված մեղադրանքների հիմքում դրված այդ ապացույցներն ըստ էության համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված թույլատրելիության և վերաբերելիության, իսկ համակցությամբ՝ գործի ճիշտ լուծման տեսանկյունով՝ բավարարության չափանիշներին:

Դատարանը գտնում է, որ Լաուրա Բաղդասարյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Մանե Աղաբեկյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Քրիստինե Գևորգյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքները որակված են ճիշտ, վերջիններս քրեական պատասխանատվության և պատժի են ենթակա այդ հոդվածներով (համապատասխան մասերով և կետերով):

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է նույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Ամբաստանյալ Լաուրա Բաղդասարյանի նկատմամբ պատիժ սահմանելիս, Դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի վերը նշված հոդվածներին համապատասխան հաշվի է առնում նրա կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև գործի ողջ տվյալները:

Լաուրա Բաղդասարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով կատարված արարքը ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի ՀՀ քրեական օրենսգրքի օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն դասվում է ծանր հանցագործությունների շարքին:

Դատարանը, որպես ամբաստանյալ Լաուրա Բաղդասարյանի անձը բնութագրող տվյալներ դիտում է այն, որ վերջինս նախկինում դատված չէ, ՀՀ վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության և Ջերմուկի համայնքի ղեկավարի, ՀՀԿ Ջերմուկի շրջանային կազմակերպության կողմից բնութագրվում է դրական, ՀՀԿ նախագահ Ս. Սարգսյանի կողմից Լ. Բաղդասարյանին տրվել է շնորհակալագիր, ՀՀ Վայոց ձորի մազպետի, կողմից Լ. Բաղդասարյանին տրվել են շնորհակալագրեր և պատվոգիր, Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրենի կողմից բնութագրվում է դրական, ՀՀ կրթության և գիտության նախարարի, Կրթության ազգային ինստիտուտի և ԳՏՀ <<Կենսաբազմազանության կայուն կառավարում>> ծրագրի ղեկավարի կողմից Լ. Բաղդասարյանին տրվել են պատվոգրեր, ըստ հայ-ամերիկյան առողջության կենտրոնի կողմից տրված թիվ 212 էպիկրիզի Լ. Բաղդասարյանի մոտ առկա է աջ կրծքագեղձի ինվազիվ խառը կառուցվածքի ծորանա-բլթակային կարցինոմա, G2 TINOMO ֆիբրոզ-կիստոզ փոփոխությունների ֆոնի վրա:(հ.1, գ.թ.44, 46-47, Դատարան ներկայացված նյութեր)

Դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի հիմքով որպես ամբաստանյալ Լաուրա Բաղդասարյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ վերջինս կամովին ամբողջությամբ հատուցել է հանցագործությամբ պատճառված վնասը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի հիմքով որպես ամբաստանյալ Լաուրա Բաղդասարյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ վերջինս ընդունել է մեղքը և անկեղծորեն զղջացել է կատարածի համար, ինչը էականորեն նվազեցնում է Լ. Բաղդասարյանի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը:

Միևնույն ժամանակ, Դատարանն ապացուցված է համարում, որ բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված ամբաստանյալ Լ. Բաղդասարյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասով որպես պատիժ է նախատեսված ազատազրկում՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Հաշվի առնելով ամբաստանյալ Լաուրա Բաղդասարյանի կողմից կատարած հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող վերը նշված հանգամանքների առկայությունը՝ այն, որ վերջինս կամովին ամբողջությամբ հատուցել է հանցագործությամբ պատճառված վնասը՝ 3.491.851 ՀՀ դրամը, ընդունել է մեղքը և անկեղծորեն զղջացել է կատարածի համար, և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, նրա անձը բնութագրող տվյալները՝ այն, որ վերջինս նախկինում դատված չէ, ՀՀ վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության և Ջերմուկի համայնքի ղեկավարի, ՀՀԿ Ջերմուկի շրջանային կազմակերպության կողմից բնութագրվում է դրական, ՀՀԿ նախագահ Ս. Սարգսյանի կողմից Լ. Բաղդասարյանին տրվել է շնորհակալագիր, ՀՀ Վայոց ձորի մազպետի, կողմից Լ. Բաղդասարյանին տրվել են շնորհակալագրեր և պատվոգիր, Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրենի կողմից բնութագրվում է դրական, ՀՀ կրթության և գիտության նախարարի, Կրթության ազգային ինստիտուտի և ԳՏՀ <<Կենսաբազմազանության կայուն կառավարում>> ծրագրի ղեկավարի կողմից Լ. Բաղդասարյանին տրվել են պատվոգրեր, ըստ հայ-ամերիկյան առողջության կենտրոնի կողմից տրված թիվ 212 էպիկրիզի Լ. Բաղդասարյանի մոտ առկա է աջ կրծքագեղձի ինվազիվ խառը կառուցվածքի ծորանա-բլթակային կարցինոմա, G2 TINOMO ֆիբրոզ-կիստոզ փոփոխությունների ֆոնի վրա, ելնելով պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից, Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Լ. Բաղդասարյանին ՀՀ

քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքի համար նախատեսված պատժից նրա նկատմամբ որպես պատիժ պետք է նշանակել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ, ազատազրկման ձևով նշանակված պատժին պետք է հաշվակցել Լաուրա Բաղդասարյանին նախաքննության ընթացքում անազատության մեջ պահելու 2 օրը և վերջինիս նկատմամբ որպես վերջնական պատիժ պետք է նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 11 (տասնմեկ) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Միևնույն ժամանակ, քննարկելով ամբաստանյալ Լ. Բաղդասարյանի կողմից նրա նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը կրելու հարցը, Դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է այն հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Նշված հոդվածի 3-րդ մասն ամրագրել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ մեկից հինգ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ դրույթների մեկնաբանությունից ակնհայտ է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ինչպես հանցագործությունների տեսակների, հանցավոր արարքի վտանգավորության աստիճանի ու բնույթի, այնպես էլ անձանց շրջանակի հետ կապված որևէ հատուկ սահմանափակում օրենսդիրը չի նախատեսել, այսինքն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է համարվում դատարանի համոզվածությունն առ այն, որ դատապարտյալի ուղղվելն հնարավոր է առանց որոշակի պատժատեսակները ռեալ կրելու (նման մեկնաբանություն է արել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը Հասմիկ Պետրոսյանի վերաբերյալ թիվ ԱՐԱԴ/0050/01/08 քրեական գործով 2009թ. հունիսի 29-ին կայացրած որոշմամբ):

Դատարանի այդ համոզվածությունը կարող է կայանալ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված (ինչպես նաև չնախատեսված, բայց Դատարանի համոզմամբ այդպիսին դիտարկվող) և 63-րդ հոդվածում սպառիչ թվարկված, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների գնահատման արդյունքներով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է մի շարք որոշումներում: Մասնավորապես, Հ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշմամբ արձանագրվել է, որ «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց իրական պատիժ նշանակելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին (...)» (տե՛ս Հուսիկ Սուրենի Բաղդասարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-

ի թիվ ԱՎԴ2/0059/01/08 որոշումը, կետ 24): Նմանատիպ մոտեցում է արտահայտվել նաև Վճռաբեկ դատարանի ՎԲ-50/07, ՎԲ-192/07, ՎԲ-01/08 որոշումներում:

Դատարանի համոզմամբ, ամբաստանյալ Լ. Բաղդասարյանի անձը բնութագրող վերը նշված տվյալները՝ այն, որ վերջինս նախկինում դատված չէ, ՀՀ վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության և Ջերմուկի համայնքի ղեկավարի, ՀՀԿ Ջերմուկի շրջանային կազմակերպության կողմից բնութագրվում է դրական, ՀՀԿ նախագահ Ս. Սարգսյանի կողմից Լ. Բաղդասարյանին տրվել է շնորհակալագիր, ՀՀ Վայոց ձորի մազպետի, կողմից Լ. Բաղդասարյանին տրվել են շնորհակալագրեր և պատվոգիր, Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրենի կողմից բնութագրվում է դրական, ՀՀ կրթության և գիտության նախարարի, Կրթության ազգային ինստիտուտի և ԳՏՀ <<Կենսաբազմազանության կայուն կառավարում>> ծրագրի ղեկավարի կողմից Լ. Բաղդասարյանին տրվել են պատվոգրեր, ըստ հայ-ամերիկյան առողջության կենտրոնի կողմից տրված թիվ 212 էպիկրիզի Լ. Բաղդասարյանի մոտ առկա է աջ կրծքագեղձի ինվազիվ խառը կառուցվածքի ծորանա-բլթակային կարցինոմա, G2 TINOMO ֆիբրոզ-կիստոզ փոփոխությունների ֆոնի վրա, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները՝ այն, որ վերջինս կամովին ամբողջությամբ հատուցել է հանցագործությամբ պատճառված վնասը՝ 3.491.851 ՀՀ դրամը, ընդունել է մեղքը և անկեղծորեն զղջացել է կատարածի համար, միևնույն ժամանակ նաև՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, էականորեն նվազեցնում են ինչպես ամբաստանյալի անձի, այնպես էլ նրա կատարած հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, և նշված հանգամանքներն իրենց ամբողջության մեջ հնարավորություն են տալիս ամբաստանյալին դիտել ոչ միայն որպես հանցանք կատարող, որը պետք է պատասխանատվություն կրի, այլ նաև որպես կոնկրետ անձի՝ իր անհատական հատկանիշներով:

Նշված հիմնավորումներով, միևնույն ժամանակ նաև ելնելով պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից՝ Դատարանը հանգում է այն համոզվածության, որ Լաուրա Բաղդասարյանի ուղղվելը և նոր հանցագործությունները կանխելը հնարավոր է նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակվող պատիժը պայմանականորեն չկիրառելու և միաժամանակ ողջամիտ, տվյալ դեպքում՝ չորս տարի ժամկետով փորձաշրջան սահմանելու պայմաններում, ինչի արդյունքում հնարավոր է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների իրականացումը՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Դատարանը գտնում է նաև, որ Լաուրա Բաղդասարյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը պետք է դնել այլընտրանքային պատիժների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող բաժնի նրա բնակության վայրի ստորաբաժանման վրա:

Ամբաստանյալ Մանե Աղաբեկյանի նկատմամբ պատիժ սահմանելիս, Դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի վերը նշված հոդվածներին համապատասխան հաշվի է առնում նրա կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, կատարված հանցագործությանը Մ. Աղաբեկյանի մասնակցության բնույթը և աստիճանը, ինչպես նաև գործի ողջ տվյալները:

Մանե Աղաբեկյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով կատարված արարքը ըստ բնույթի և հանրության համար

վտանգավորության աստիճանի ՀՀ քրեական օրենսգրքի օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն դասվում է ծանր հանցագործությունների շարքին:

Դատարանը, որպես ամբաստանյալ Մանե Աղաբեկյանի անձը բնութագրող տվյալներ դիտում է այն, որ վերջինս նախկինում դատված չէ, բնութագրվում է դրական:(հ.1, գ.թ.43, հ.2 գ.թ. 285)

Դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով որպես ամբաստանյալ Մանե Աղաբեկյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ վերջինս ընդունել է մեղքը և անկեղծորեն զղջացել է կատարածի համար, հանցագործությամբ պատճառված վնասը ամբողջությամբ վերականգնված է, ինչը էականորեն նվազեցնում է Մ. Աղաբեկյանի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը:

Միևնույն ժամանակ, Դատարանն ապացուցված է համարում, որ բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված ամբաստանյալ Մ. Աղաբեկյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասով որպես պատիժ է նախատեսված ազատազրկում՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Հաշվի առնելով ամբաստանյալ Մանե Աղաբեկյանի կողմից կատարած հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող վերը նշված հանգամանքների առկայությունը՝ այն, որ վերջինս ընդունել է մեղքը և անկեղծորեն զղջացել է կատարածի համար, հանցագործությամբ պատճառված վնասը ամբողջությամբ վերականգնված է, և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, նրա անձը բնութագրող տվյալները՝ այն, որ վերջինս նախկինում դատված չէ, բնութագրվում է դրական, ելնելով պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից, հաշվի առնելով կատարված հանցագործությանը վերջինիս մասնակցության բնույթը և աստիճանը, Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Մ. Աղաբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքի համար նախատեսված պատժից նրա նկատմամբ որպես պատիժ պետք է նշանակել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ, ազատազրկման ձևով նշանակված պատժին պետք է հաշվակցել Մանե Աղաբեկյանին նախաքննության ընթացքում անազատության մեջ պահելու 1 օրը և վերջինիս նկատմամբ որպես վերջնական պատիժ պետք է նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 11 (տասնմեկ) ամիս 29 (քսանինը) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Միևնույն ժամանակ, քննարկելով ամբաստանյալ Մ. Աղաբեկյանի կողմից նրա նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը կրելու հարցը, Դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Դատարանի համոզմամբ, ամբաստանյալ Մ. Աղաբեկյանի անձը բնութագրող վերը նշված տվյալները՝ այն, որ վերջինս նախկինում դատված չէ, բնութագրվում է դրական, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները՝ այն, որ վերջինս ընդունել է մեղքը և անկեղծորեն զղջացել է կատարածի համար, հանցագործությամբ պատճառված վնասը ամբողջությամբ վերականգնված է, միևնույն ժամանակ նաև՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, կատարված հանցագործությանը նրա մասնակցության բնույթը և աստիճանը էականորեն նվազեցնում են ինչպես ամբաստանյալի անձի, այնպես էլ նրա կատարած հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, և նշված

հանգամանքներն իրենց ամբողջության մեջ հնարավորություն են տալիս ամբաստանյալին դիտել ոչ միայն որպես հանցանք կատարող, որը պետք է պատասխանատվություն կրի, այլ նաև որպես կոնկրետ անձի՝ իր անհատական հատկանիշներով:

Նշված հիմնավորումներով, միևնույն ժամանակ նաև ելնելով պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից՝ Դատարանը հանգում է այն համոզվածության, որ Մանե Աղաբեկյանի ուղղվելը և նոր հանցագործությունները կանխելը հնարավոր է նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակվող պատիժը պայմանականորեն չկիրառելու և միաժամանակ ողջամիտ, տվյալ դեպքում՝ չորս տարի ժամկետով փորձաշրջան սահմանելու պայմաններում, ինչի արդյունքում հնարավոր է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների իրականացումը՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Դատարանը գտնում է նաև, որ Մանե Աղաբեկյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը պետք է դնել այլընտրանքային պատիժների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող բաժնի նրա բնակության վայրի ստորաբաժանման վրա:

Ամբաստանյալ Քրիստինե Գևորգյանի նկատմամբ պատիժ սահմանելիս, Դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի վերը նշված հոդվածներին համապատասխան հաշվի է առնում նրա կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, կատարված հանցագործությանը Ք. Գևորգյանի մասնակցության բնույթը և աստիճանը, ինչպես նաև գործի ողջ տվյալները:

Քրիստինե Գևորգյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կատարված արարքը ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի ՀՀ քրեական օրենսգրքի օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն դասվում է միջին ծանրության հանցագործությունների շարքին:

Դատարանը, որպես ամբաստանյալ Քրիստինե Գևորգյանի անձը բնութագրող տվյալներ դիտում է այն, որ վերջինս նախկինում դատված չէ, բնութագրվում է դրական:(հ.2 գ.թ. 207, Դատարանի նյութեր)

Դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով որպես ամբաստանյալ Քրիստինե Գևորգյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում պատիժ նշանակելու պահին նրա խնամքի տակ մինչև տասնչորս տարեկան երեխայի՝ Անդրանիկ Մարտինի Բաբաջանյանի՝ ծնված 20.07.2006թ., առկայությունը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով որպես ամբաստանյալ Քրիստինե Գևորգյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ վերջինիս խնամքի տակ են գտնվում երկու անչափահաս երեխաները՝ 03.09.1998թ. ծնված Խաչատուր Մարտինի Բաբաջանյանը և 16.06.2001թ. ծնված Սյուզաննա Մարտինի Բաբաջանյանը, վերջինս ընդունել է մեղքը և անկեղծորեն զղջացել է կատարածի համար, հանցագործությամբ պատճառված վնասը ամբողջությամբ վերականգնված է, ինչը էականորեն նվազեցնում է Մ. Աղաբեկյանի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը: (հ.2 գ.թ. 287, Դատարանի նյութեր)

Միևնույն ժամանակ, Դատարանն ապացուցված է համարում, որ բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված՝ ամբաստանյալ Ք. Գևորգյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասով որպես պատիժ է նախատեսված տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկում՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ՀՀ վճռաբեկ դատարանն այլընտրանքային սանկցիաների միջև ընտրություն կատարելու վերաբերյալ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Այլընտրանքային սանկցիաների միջև ընտրություն կատարելիս պատժի արդարացիության սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը դատարանների կողմից յուրաքանչյուր գործի քննության ժամանակ այնպիսի հանգամանքների բացահայտումն է, որոնք ազդել են անձի կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա:

Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (Տես ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԴ/0029/01/08 քրեական գործով որոշումը):

Հաշվի առնելով ամբաստանյալ Քրիստինե Գևորգյանի կողմից կատարած հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող վերը նշված հանգամանքների առկայությունը՝ պատիժ նշանակելու պահին նրա խնամքի տակ մինչև տասնչորս տարեկան երեխայի՝ Անդրանիկ Մարտինի Բաբաջանյանի՝ ծնված 20.07.2006թ., առկայությունը, այն, որ վերջինիս խնամքի տակ են գտնվում երկու անչափահաս երեխաները՝ 03.09.1998թ. ծնված Խաչատուր Մարտինի Բաբաջանյանը և 16.06.2001թ. ծնված Սյուզաննա Մարտինի Բաբաջանյանը, վերջինս ընդունել է մեղքը և անկեղծորեն զղջացել է կատարածի համար, հանցագործությամբ պատճառված վնասը ամբողջությամբ վերականգնված է, և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, նրա անձը բնութագրող տվյալները՝ այն, որ վերջինս նախկինում դատված չէ, բնութագրվում է դրական, ելնելով պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից, հաշվի առնելով կատարված հանցագործությանը վերջինիս մասնակցության բնույթը և աստիճանը, Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ք. Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքի համար նախատեսված պատժից նրա նկատմամբ որպես պատիժ պետք է նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու:

Դատարանը, հաշվի առնելով, որ տուժողի ներկայացուցիչ Ն.Մաղաքյանը դատական նիստի ժամանակ խնդրել է քաղաքացիական հայցը թողնել առանց քննության՝ Դատարանին ներկայացնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանի 02.07.2015թ. գրություն, որում մասնավորապես նշված է, որ հիմք ընդունելով Լ. Բաղդասարյանի կողմից պետությանը պատճառված 3.491.851 ՀՀ դրամից պակաս

վերականգնված 178.611 ՀՀ դրամը վերականգնելու վերաբերյալ 19.05.2015թ. անդորրագիրը, Վայոց ձորի մարզպետարանը հրաժարվում է 25.05.2015թ. ներկայացված հայցապահանջից և խնդրում է հայցադիմումը թողնել առանց քննության և, որ Դատարանը ընդունել է քաղաքացիական հայցից հրաժարվելը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի իրավադրույթներով, գտնում է, որ Լաուրա Բաղդասարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության 178.611 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ներկայացուցչի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից ներկայացված քաղաքացիական հայցի վարույթը պետք է կարճել:

Լուծելով իրեղեն ապացույցների տնօրինման հարցը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածով՝ դատարանը գտնում է, որ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ իրեղեն ապացույց ճանաչված <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի 2008-2014թթ հաշվապահական փաստաթղթերը, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲ ընկերությունից ստացված խտասկավառակը, Մանե Աղաբեկյանից աշխատավարձի ստացման պլաստիկ քարտը, Մանե Աղաբեկյանի անձնական գործը, քրեական գործով այլ փաստաթուղթ ճանաչված <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ Ջերմուկի մասնաճյուղից տրված տեղեկանքը, Լաուրա Բաղդասարյանի անվամբ 3.243.240 ՀՀ դրամ գումարի մուծման անդորրագրերը, Լաուրա Բաղդասարյանի կողմից 70.000 ՀՀ դրամ գումարի մուծման դրամարկղային մուտքի օրդերը պետք է պահել քրեական գործի հետ միասին դրա պահպանման ամբողջ ժամանակահատվածում:

Դատարանն անդրադառնալով Լաուրա Բաղդասարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի՝ չհեռանալու մասին ստորագրության, հարցին, գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանն անդրադառնալով Մանե Աղաբեկյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի՝ չհեռանալու մասին ստորագրության, հարցին, գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանն անդրադառնալով Քրիստինե Գևորգյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի՝ չհեռանալու մասին ստորագրության, հարցին, գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանն արձանագրում է, որ ըստ մեղադրական եզրակացության՝ քրեական գործով առկա է 201.600 ՀՀ դրամ գումարի դատական ծախս՝ որպես դատահաշվապահական-ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արժեք, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375^3-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-8-րդ կետերով նախատեսված դատական ծախսերն ամբաստանյալներից ենթակա չեն բռնագանձման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360-րդ, 365-րդ, 369-373-րդ, 375^3-375^4–րդ հոդվածներով, Դատարանը՝

4. Եզրափակիչ մաս.

ՎՃՌԵՑ

Լաուրա Գվիդոնի Բաղդասարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ, և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում 5 /հինգ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ, ազատազրկման ձևով նշանակված պատժին հաշվակցել Լաուրա Բաղդասարյանին նախաքննության

ընթացքում անազատության մեջ պահելու 2 օրը և վերջինիս նկատմամբ որպես վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 11 (տասնմեկ) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթները և Լաուրա Գվիդոնի Բաղդասարյանի նկատմամբ որպես վերջնական պատիժ 4 (չորս) տարի 11 (տասնմեկ) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, սահմանել փորձաշրջան 4 /չորս/ տարի ժամկետով:

Դատապարտյալ Լաուրա Բաղդասարյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնել ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող բաժնի նրա բնակության վայրի ստորաբաժանման վրա:

Լաուրա Գվիդոնի Բաղդասարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Մանե Յուրիկի Աղաբեկյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ, և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում՝ 5 /հինգ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ, ազատազրկման ձևով նշանակված պատժին հաշվակցել Մանե Աղաբեկյանին նախաքննության ընթացքում անազատության մեջ պահելու 1 օրը և վերջինիս նկատմամբ որպես վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 11 (տասնմեկ) ամիս 29 (քսանինը) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթները և Մանե Յուրիկի Աղաբեկյանի նկատմամբ որպես վերջնական պատիժ 4 (չորս) տարի 11 (տասնմեկ) ամիս 29 (քսանինը) օր ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, սահմանել փորձաշրջան 4 /չորս/ տարի ժամկետով:

Դատապարտյալ Մանե Աղաբեկյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնել ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող բաժնի նրա բնակության վայրի ստորաբաժանման վրա:

Մանե Յուրիկի Աղաբեկյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Քրիստինե Հրանտի Գևորգյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ, և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

Քրիստինե Հրանտի Գևորգյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Լաուրա Բաղդասարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության 178.611 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից ներկայացված քաղաքացիական հայցի վարույթը կարճել:

Դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ իրեղեն ապացույց-ճանաչված <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի 2008-2014թթ հաշվապահական փաստաթղթերը, <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲ ընկերությունից ստացված խտասկավառակը, Մանե

Աղաբեկյանից աշխատավարձի ստացման պլաստիկ քարտը, Մանե Աղաբեկյանի անձնական գործը, քրեական գործով այլ փաստաթուղթ ճանաչված <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ Ջերմուկի մասնաճյուղից տրված տեղեկանքը, Լաուրա Բաղդասարյանի անվամբ 3.243.240 ՀՀ դրամ գումարի մուծման անդորրագիրը, Լաուրա Բաղդասարյանի կողմից 70.000 ՀՀ դրամ գումարի մուծման դրամարկղային մուտքի օրդերը պահել քրեական գործի հետ միասին դրա պահպանման ամբողջ ժամանակահատվածում:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Դատավճիռը, բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքի, կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ այն ստանալու պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

<u>Ծանոթություն.</u>

Դատավճիռը չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ 2015 թվականի սեպտեմբերի 01-ին:

ԴԱՏԱՎՈՐ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ